ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 25 >> 04 2013թ. N: 98-Ա **ք.Գյումրի**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԳՅՈՒՄՐՈՒ ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ>> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի <<Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին>> ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի հունվարի 30-ի N 23-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության առողջապահական պետական ոչ առևտրային կազմակերպությունների և հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերության գործադիր մարմնի ընտրության (նշանակման) մրցույթի կարգի>> 6-րդ և 7-րդ կետերի դրույթները.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Ստեղծել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի <<Գյումրու արյան փոխներարկման կայան>> փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2013 թվականի ապրիլի 26-ին անցկացվող մրցույթի մրցութային հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

Խաչատուր Պողոսյան	- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար (նախագահ)
Տիգրան Ղարիբյան	- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (քարտուղար)
Լիպարիտ Մարտիրոսյան	- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ
Մովսես Մանուկյան	- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Հովհաննես Հովհաննիսյան	- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ
Մարիամ Գյոդակյան	- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ
Սամվել Գրիգորյան	- ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝